600.0054.12.11.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2001 թվականի №54
ք.Երևան

«Լեռ և ջուր» ՍՊԸ-ի «Արջուտ» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և 59-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Լեռ և ջուր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Արջուտ գյուղի տարածքում կառուցված «Արջուտ» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 16.527 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 13.773 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:
2. «Լեռ և ջուր» ՍՊԸ-ի «Արջուտ» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի 2001 թվականի քվոտան սահմանել 456.44 հազ. կՎտժ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի դեկտեմբերի 13-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**